«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 19.01.2023թ. էլեկտրոնային նամակագրությամբ անցկացված նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ. ԹԻՎ 14

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ՇՊՀ) հոգաբարձուների խորհրդի հիմնադրամի (այսուհետ՝ ՀԽ) նիստը կայացավ առցանց:

Առցանց նիստին վերաբերող նյութերը 2023 թ, հունվարի 14-ին ուղարկվել են հոգաբարձուների խորհրդի 20 (քսան) անդամներն.

1. Կարեն Թոչունյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ,
2. Նազելի Բաղդասարյան - ՀՀ Շիրակի մարզպետ,
3. Արթուր Շատվորյան-ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ,
4. Արտուր Մովսիսյան-ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահի տեղակալ,
5. Արթուր Պապիկյան - Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալ,
6. Լևոն Բարսեղյան - Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ,
7. Ջոն Կարապետյան-ՀՀ ԳԱԱ-ի «Ա. Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի տնօրեն,
8. Արմեն Թումասյան-«Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի ավագ գիտաշխատող,
9. Բագրատ Ենգիբարյան - «Զեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի տնօրեն:
10. Ալեքսան Տեր-Մինասյան – «Ֆյուր Արմենիեն» հիմնադրամի տնօրեն,
11. Լուսինե Գևորգյան-«ՇՊՀ» հիմնադրամի հասարակական գիտությունների ֆակուլտետի դոցենտ,
12. Վարդան Մանուկյան-«ՇՊՀ» հիմնադրամի բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դոցենտ,
13. Աիդա Գարեգինյան-«ՇՊՀ» հիմնադրամի հումանիտար գիտությունների ֆակուլտետի դոցենտ,
14. Աշխեն Տոնոյան-«ՇՊՀ» հիմնադրամի հասարակական գիտությունների ֆակուլտետի դասախոս,
15. Անահիտ Վալեսյան-«ՇՊՀ» հիմնադրամի բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դոցենտ,
16. Լիլիթ Ավետիսյան-«ՇՊՀ» հիմնադրամի հասարակական գիտությունների ֆակուլտետի ուսանող,
17. Մերի Դավթյան -«ՇՊՀ» հիմնադրամի հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի ուսանող,
18. Քրիստինե Առաքելյան- «ՇՊՀ» հիմնադրամի հասարակական գիտությունների ֆակուլտետի ուսանող,
19. Գևորգ Ղուկասյան-«ՇՊՀ» հիմնադրամի հասարակական գիտությունների ֆակուլտետի ուսանող,
20. Հովիկ Գալոյան- «ՇՊՀ» հիմնադրամի բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի ուսանող:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ.

1. ՇՊՀ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 23.06.2022թ. նիստի թիվ 9.2 որոշումով հաստատված հաստիքացուցակում փոփոխություններ կատարելու մասին:

ՇՊՀ Հոգաբարձուների խորհրդի նախագահ Լ.Բարսեղյանը էլեկտրոնային նամակով տեղեկացրել է, որ ՇՊՀ ռեկտոր Ե. Սերոբյանը առաջարկ է ներկայացրել.

«Այսօր ստացել եմ ՇՊՀ ռեկտոր պարոն Սերոբյանի առաջարկը՝ Հայաստանում նվազագույն աշխատավարձի բարձրացման հետ կապված որոշ հաստիքների դրույքաչափերի փոփոխությունների մասին: Կարիք կա ՇՊՀ ՀԽ որոշման՝ մեր լիազորությունների շրջանակներում:

Հարգելի գործընկերներ, առաջնորդվելով մեր աշխատակարգով, այս նամակագրությամբ՝ էլեկտրոնային հաղորդակցությամբ առաջարկում եմ քվեարկել կից ՇՊՀ ՀԽ որոշման նախագծին՝ կողմ, դեմ, կամ ձեռնպահ:

Էլեկտրոնային քվեարկության վերջնաժամկետ սահմանում եմ **մինչեւ 2023 թ. հունվարի 19-ը ժամը 17-ը:**

Բոլորին խնդրում եմ այստեղ, այս նամակին պատասխանելով «պատասխանել բոլորին» ձեւաչափով»:

Սահմանված ժամկետում՝ մինչեւ 2023 թ,. հունվարի 19-ի ժամը 17-ը Հոգաբարձուների խորհրդի անդամներից 18-ը մասնակցել են քվեարկությանը: ՀԽ 2 անդամ չի արձագանքել: Էլեկտրոնային քվեարկության արդյունքներն են.

Կողմ՝ 18 (Ա. Մովսիսյան, Լ.Գեւորգյան, Ա.Տոնոյան, Գ.Ղուկասյան, Ա.Գարեգինյան, Ա. Շատվորյան, Վ.Մանուկյան, Հ.Գալոյան, Ա. Տեր-Մինասյան, Լ.Ավետիսյան, Ք.Առաքելյան, Մ.Դավթյան, Բ. Ենգիբարյան, Ն. Բաղդասարյան, Ա.Վալսեյան, Ա.Թումասյան, Ջ.Կարապետյան, Լ. Բարսեղյան)

Ձեռնպահ՝-0

Դեմ՝-0

Ղեկավարվելով «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-501-Ն օրենքի դրույթներով և «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 41-րդ կետի 7-րդ ենթակետով և ՀԽ անդամների քվեարկության արդյունքներով, Հոգաբարձուների խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

«Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 23.06.2022թ. նիստի թիվ 9.2 որոշումով հաստատված հաստիքացուցակում կատարել վերոնշյալ օրենքից բխող հետևյալ փոփոխությունները՝

1. Սոցիալական վճար կատարող և նվազագույն ամսական աշխատավարձի չափով վարձատրվող հաստիք զբաղեցնող բոլոր աշխատողների համար կիրառել 100,000 դրամ դրույքաչափը:
2. Սոցիալական վճար չկատարող և նվազագույն ամսական աշխատավարձի չափով վարձատրվող հաստիք զբաղեցնող բոլոր աշխատողների համար կիրառել 93,750 դրամ դրույքաչափը:
3. Հնոցապանների և դռնապահ-գիշերապահների համար 1 ժամի արժեքը՝ ներառյալ հավելավճարները, սահմանել 750 դրամ:

ՇՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ՝ Լ. Բարսեղյան

ՇՊՀ հոգաբարձուների խորհրդի քարտուղար՝ Ա. Վալեսյան